Ք.Երևան 09.02.2026թ.

«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողով

Արամ Մկրտչյանի կողմից, հնարավոր վարքագծի վերաբերյալ կանոնների խախտման դեպքում, կարգապահական վարույթ հարուցելու համար լսումներ հրավիրելու մասին

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հանձնաժողովը, մասնակցությամբ՝ հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանի, հանձնաժողովի անդամներ՝ Լուսինե Սարգսյանի, Հարություն Գևորգյանի և Արմենակ Աղամյանի, քննարկելով ըստ Արթուր Սինասարի Ասլանյանի /այսուհետ՝ դիմումատու/ Արամ Մկրտչյանի նկատմամբ ներկայացված, կարգապահական վարույթ հարուցելու մասին դիմումը պարզեց, որ ներկայացված դիմումի առնչությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 27.3 հոդվածի 1-ին մասի «3»-րդ ենթակետի և նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ մասերով սահմանված նորմերով, կառավարիչ՝ Արամ Մկրտչյանի /այսուհետ կառավարիչ/ նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ:

Դիմումատուի կողմից սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա ինքնակարգավորվող կազմակերպություն,տնօրեն՝ Ա.Ելինյանին է ներկայացվել բողոք, որով վերջինս հայտնել է, որ 2022թ-ի օգոստոսի 29-ին Արթուր Սինասարի Ասլանյանը ՀՀ սնակության դատարանի թիվ ՍՆԴ/2336/04/22վճռով ճանաչվել է սնանկ:19.09.2022թ-ին գործով հիմնական կառավարիչ է նշանակվել Արամ Մկրտչյանը:

Դիմումատուն հայտնել է, որ իր անվամբ համատեղ սեփականության իրավունքով գրանցված է ՀՀ Լոռու մարզ, Ախթալա համայնք, ք. Ախթալա, Շահումյան փողոց, 13 շենք, բն. 20 հասցեում գտնվող բնակարանը եւ ՀՀ Լոռու Ախթալա համայնք, ք. Ախթալա, Շահումյան թիվ 67 հասցեում գտնվող ավտոտնակը:Վերոնշյալ գույքերը գնահատվել են «ԻՆԵՔՍ» ՍՊԸ-ի կողմից, համաձայն որոնց ՀՀ Լոռու Ախթալա համայնք, ք. Ախթալա, Շահումյան փողոց, 13 շենք, բն. 20 հասցեի անշարժ գույքի շուկայական արժեքը կազմում է 1.950.000 ՀՀ դրամ, իսկ ինձ՝ Արթուր Սինասարի Ասլանյանին պատկանող 2/3 մասը կազմում է 1.300.000 ՀՀ դրամ:Ըստ դիմումատուի տվյալ բնակարանը բռնագանձման ենթակա գույք չի հանդիսանում, քանի որ չի գերազանցում ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված միակ բնակարանի բռնագանձելու համար որոշված նվազագույն արժեքը՝ 4.900.000 ՀՀ դրամը, բացի դա սնանկության գործում առկա է տեղեկանք այն մասին, որ Արթուր Սինասարի Ասլանյանը հաշվառված բնակվում է ՀՀ Լոռու մարզ, Ախթալա համայնք, քաղաք Ախթալա, Շահումյան փողոց, թիվ 13 շենք, բն. 20 հասցեում եւ բնակարանը հանդիսանում է նրա մշտական բնակության միակ վայրը:Դիմումատուն նշել է, որ ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 96 հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ պարտապանի կամ այլ անձանց պահանջով դատարանի որոշմամբ բռնագանձում կարող է չտարածվել բռնագանձման ենթակա պարտապանի այն գույքի վրա, որի արժեքը էական ազդեցություն չի կարող ունենալ պարտատերերի պահանջների բավարարման համար:

Ըստ դիմումատուի, Լոռու Ախթալա համայնք, ք. Ախթալա, Շահումյան թիվ 67 հասցեում գտնվող ավտոտնակի շուկայական արժեքը գնահատվել է 280.000 ՀՀ դրամ, որից ինձ պատկանող 1/2 բաժնեմասի արժեքը կազմում է 140.000 ՀՀ դրամ, իսկ 13.12.2022թ-ին դատարանը հաստատել է կառավարչի կողմից ներկայացված պարտատերերի վերջնական ցուցակը եւ պարտատերերի ժողով նշանակվել 2023թ-ի հունվարի 17-ին, ժամը 11-30-ին:

Ըստ դիմումատուի ակնհայտ է, որ կառավարչի անտարբեր վերաբերմունքի պատճառով ձգձգվում է սնանկության վարույթի ավարտը, քանի որ բազմաթիվ անգամներ գրավոր և բանավոր կերպով դիմել է նրան և մի քանի անգամ կառավարիչը ասել է, որ իրեն տրամադրենք ամուսնության վկայականի պատճեն, դիմումատուի կնոջ անձը հաստատող փաստաթղթի պատճենը, որոնք ես պարտաճանաչ կերպով փոխանցել եմ ներկայացուցչի միջոցով՝ էլեկտրոնային փոստի միջոցով, որը կառավարիչը ստացել է:Անցել է ժամանակ կրկին անգամ դիմումատուն զանգահարել է կառավարչին և ասել է, որ չի գտնում և կրկին նույն էլ. փոստից իրեն է ուղարկել անձնագրերը և իր կողմից պահանջված մյուս փաստաթղթերը:Ըստ դիմումատուի կառավարիչը անտեսել է ուղարկված գրությունները, փաստաթղթերը և եղել է անհարգալից, մինչդեռ ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 23.1 հոդվածով սահմանված է կառավարչի վարքագծի կանոնները, որը ըստ դիմումատուի կառավարիչը խախտել է, քանի որ դիմումատուն մի քանի անգամ

զանգահարել է կառավարչին և ցանկացել է ստանալ տեղեկություն այն մասին, թե ինչպես և երբ կարող է ստանալ իր աշխատավարձը ամբողջությամբ, քանի որ բանկից պահանջել են կառավարչի համաձայնությունը, սակայն կառավարիչը պատասխանել է, որ թող նման հարցերով զբաղվի իմ ներկայացուցիչը, միայն քաղաքացուց գումար վերցնելով չի, ինչի՞ է դիմումատուն զանգում:Ըստ դիմումատուի կառավարչի նման կերպ արտահայտվելը վիրավորանք է հասցնում նաեւ փաստաբնի անձի եւ որակավորման նկատմամբ, մինչդեռ դիմումատուի ներկայացուցիչը ևս մի քանի անգամ գրություններ է ուղարկել կառավարչին, խնդրելով տրամադրել տեղեկություն գործի ընթացքի վերաբերյալ և բավարար հիմքերի առկայության դեպքում միջնորդել դատարանին ավարտել գործը, սակայն որեւէ պատասխան դիմումատուն չի ստացել:Միաժամանակ հարկ է նշել, որ դիմումատուի կողմից իր դիմումով նշել են նաև այն նմանատիպ բնույթի խախտումներ և խնդրել է կառավարիչին ենթարկել կարգապահական պատասխանատվության և խնդրել է նաև լինել հետևողական, որպեսզի սնանկության վարույթը օրենքով սահմանված կարգով հասնի իր ավարտին:

Կառավարչի կողմից, վարքագծի վերաբերյալ կանոնների հնարավոր խախտումը պարզելու նպատակով, 03.10.2025թ.-ին նշանակվել է նիստ, որը հետաձգվել է կառավրչի միջնորդությամբ, որով վերջինս խնդրել է տրամադրել ժամկետ, դիմումում նշված հանգամանքները ուղղելու և շտկելու նպատակով:

Հանձնաժողովը հաստատված է համարում այն փաստը, որ կարգապահական վարույթի ընթացքում դիմումատուի կողմից ներկայացվել է դիմում, որով դիմումատուն հայտնել է, որ սնանկության գործով կառավարիչի հետ եկել են հաշտության, վարույթը շարունակվում է և կառավարիչից ստացել է տեղեկատվություն առ այն, որ սնանկության գոնծը շուտով կավարտվի:Ելնելով նշվածից, դիմումատուին չի պնդել իր դիմումը և խնդրել է կարճել հարուցված կարգապահական վարույթը:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 27.4 հոդվածի 1-ին մասի 7-րդ ենթակետը նախատեսում է, որ Կարգապահական վարույթ հարուցող մարմինը չի հարուցում կառավարչին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթ, իսկ հարուցված վարույթը կարճում է, եթե մինչև կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշում կայացնելը, կառավարիչը վերացրել է կարգապահական վարույթ հարուցելու հիմք հանդիսացած հանգամանքները:

Եթե դիտարկենք վերը նշված նորմի փաստական հանգամանքները, ապա հանձնաժողովը ներկայացված դիմումի առընչությամբ եկավ այն եզրակացության, որ չնայած նրան, որ իրականում կարող էին դիմումատուի կողմից դիմումում ներկայացրած հանգամանքները իրոք հանդիսանալ կառավարչի կողմից վարքագծի կանոնի խախտում, սակայն հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դիմումից ըստ էության դիմումատուն հրաժարվել է, իսկ նման պայմաններում կարգապահական հանձնաժողովը չունի ըստ էության դիմում, ուստի կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Ա.Սարգսյան

Լ.Սարգսյան

Հ.Գևորգյան

Ա.Աղամյան